ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ

25.10.2023 18:59

Այսօր՝ 2023 թվականի հոկտեմբերի 25-ին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում տեղի է ունեցել Արցախի Հանրապետության փաստաբանների հետ հանդիպում:

Արցախի փաստաբանների հետ հանդիպել են նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը, ՀՀ փաստաբանական ակադեմիայի ռեկտոր Արա Ջոհրաբյանը, Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար Գևորգ Մկրտչյանը և Փաստաբանների պալատի ու Փաստաբանական ակադեմիայի այլ ներկայացուցիչներ:

Հայաստանի փաստաբանները լսել են Արցախի գործընկերներին մտահոգող խնդիրները՝ կեցության վերաբերյալ, աշխատանքի, ինչպես նաև փաստաբանական գործունեությանն առնչվող այլ կարևոր հարցեր՝ առաջարկելով դրանց լուծմանն ուղղված համատեղ գործընթաց իրականացնել:

Ի թիվս այլ հարցերի, առաջնահերթ կարևորվել է կարճ ժամանակում Արցախի Հանրապետության փաստաբանների անդամակցումը ՀՀ փաստաբանների պալատին, որի լուծման համար անհրաժեշտ է օրենքի փոփոխություն:

Հատկանշական է նաև այն, որ Արցախի գործընկերներին աշխատանքով կամ աշխատասենյակներով ապահովելու խնդրի լուծումը ՀՀ փաստաբանների պալատը հանձն առել էր ավելի վաղ և օժանդակման ծրագրին միացել են մի շարք փաստաբանական գրասենյակներ:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահը նշել է, որ դեռևս աշխատատեղով չապահովված գործընկերների համար հատկացվել են աշխատասենյակներ՝ մինչ առկա խնդիրների վերացումը և բնականոն գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում:

Նշենք նաև, որ ՀՀ փաստաբանների պալատում և ՀՀ փաստաբանական ակադեմիայում Արցախի գործընկերների համար առաջիկայում կմեկնարկի վերապատրաստումների հատուկ ծրագիր:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })